Հոդվածի մեջ տեղ գտած բազմաթիվ հարցերն ու հարցականները խոսում են այն մասին, որ լրագրողը պարզապես չի խորացել նյութի մեջ (Վանաձորի ժողովրդաժնին դիմելու դեղում դրանց գերակշռող մասը կողազրաբանվեր), իսկ մի շարք միմյանց հետ չկապվող թեմաների (բաժանորդագրություն, ցեղասպանության միջոցառումներ) խճողումը ասում են, որ նոպատակը եւս մի անգամ լուսնախարարին եւ նրա սկսած գործը քննադատելն է: Եթե այն նյութի իմացությամբ եւ գործին օգնելու շահագրգռությամբ է խնդրեմ: Բայց ինքնանպատակ, ան հիմն խարազանումը կասեցնելու է դպրոցի վերականգնման դրոցեսը, իսկ մեզ սիրելու է Ձեր սխալ, չփաստարկված կնկածները հերքելու անդադար աշխատանքով զբաղվել:

ՌՈԲԵՐՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Մանկավարժության
հանրապետական ինստիտուտ

Ա՛խ, իմ հոդվածի վերնագիրն էր «Բլեյանականության «հաղթարշավը Վանաձորում», ոչ թե «հաղթանակը», ինչպես ոչ բոլոր հաղթարշավները են հաղթանակով ավարտվում:

Ըստ էության, իմ հոդվածի միակ վրիպումն այն էր, որ խաղադրոկոմի առաջարկը՝ «Բազում» կրթահամալիր ստեղծելու մասին, հավանության չի արժանացել լուսավորության նախարարության կողմից, թիվ 20 եւ 25 դպրոցների փոխարեն պետք է գործի «Բազումի» միջնակարգ դպրոցը:

Ո՞վ կարող է դեմ լինել խարաբեն շենքում սովորելու կամ սովորելու գաղափարին, սակայն թիվ 14 դպրոցի շրջակայքում գտնվող թիվ 6, 10 եւ 11 մանկապարտեզների շենքերում տարական եւ ավագ դպրոցների տեղակայումը, նրանց հարեւանությամբ մանկապարտեզների վերակազմավորումը՝ ֆինանսական, եւ կազմակերպչական դժվարությունների հետ է կապված: Վանաձորի կրթության եւ դաստիարակության բաժնի վարիչ Հայկազ Սարգսյանի հավաստիացումների համաձայն, դրանք կհաղթահարվեն մինչեւ նոր ուսումնական տարին: Հարցն այն է, որ չունենալով որեւէ դրական նախադեպ, հիշյալ եւ, ընդհանրապես, խաղաղ համարյա բոլոր դպրոցների մանկավարժներն այնքան էլ ոգեւորված չեն բլեյանական «բարեփոխումներով»: Հասկանալի դժգոհ է բնակչության սոցիալապես անապահով խավը:

Ինչ վերաբերում է դասագրքերի բաժանորդագրության, ցեղասպանության մասին միջոցառումների ծախսման, անձնական նվիրվածության սկզբունքով կադրային խաղաղությանը եւ մնացած հիմնահարցերին, դրանք չի կարելի երկրորդական համարել, որովհետեւ զգալի ազդեցություն են գործում ե՛ւ մանկավարժության, ե՛ւ բնակչության վրա, առաջացնելով նրանց արդարացի դժգոհությունը:

Հասկանալի անելանելի վիճակ է ստեղծվել «ոռճիկով ապրող» ծնողների համար, ովքեր անընդունակ են վճարել դասագրքերի բաժանորդագրության գումարը: Նրանց միակ հույսը մնացել են ծեռներեց հովանավորները:

Հոդվածը գրելու շարժառիթը ամենեւին էլ չարախոսելու ցանկությունը չի եղել եւ եթե լուսավորության նախարարի որեւէ նախաձեռնություն Վանաձորում դրական արդյունք ունենա, անկասկած, այդ մասին նույնպես կգրվի «Ազգ» թերթում:

Խնդիրը ոչ թե գաղափարների լավ կամ վատ լինելու, այլ մեր երկրի բարգավաճության մեջ ապրող բնակչության համար դրանց կիրառման նպատակահարմարության մեջ է:

ՄԱՐՏԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Սուրբ Մարկոսի զանգերը

Քաղաքը ճնում ու արթնանում է Սուրբ Մարկոս մայր տաճարի զանգերի դողանջների ներքո, որոնք օրհնանքի պես տարածվում են Վենետիկի վրա: Տաճարն իր ճոխ հարդարանքով եւ հատկապես 4 հազար քմ խճանկարներով ժամանակին կոչված է եղել ցույց տալու Վենետիկյան պետության ուժն ու հզորությունը: Այն նախագծված է հունական խաչի տեսքով. չորս գմբեթ՝ ծայրերում եւ հինգերորդ ամենախոշորը՝ կենտրոնում:

Տաճարի ճակատամասը նայում է հուսանվերները: Տոգորության գյուղից հեռո տղաների խանակով այն ա ոաջինն էր ողջ եվրոպայում: Արեւմուտքում լինելով արեւելյան մի քաղաք՝ Վենետիկը կամրջում էր այդ երկու մշակույթները: Ավանդույթները բարեբախտաբար պահպանվեցին եւ շարունակ վեցին նաեւ մեր օրերում: Հանրահայտ դիմակահանդեսները, որոնց ժամանակ խառնվում են իրականի ու երեւակայականի սահմանները, ամեն անգամ հաստատում են քաղաքի հանդեսների ոսանձ լինելու իրողությունը: 1932 ին

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղրիատիկի հավերժահարսը. Վենետիկ

Դժվար է աշխարհի քարտեզի վրա մատնանշել մեկ այլ քաղաք, որն արմատներ տված լինի բանաստեղծության, երաժշտության կերպարվեստին, ինչպես Վենետիկը: Այս քաղաքն իր արդյունքն տեղն ունի նաեւ մեր «հոգեւոր» քարտեզի վրա: Ընդ որում, ոչ միայն որպես մեկը հայոց մշակութային «մայրաքաղաքներից», այլ իբրեւ բնակավայր, որը հին դարերից սկսած առանձնահատուկ ջերմությամբ եւ ազդեցությամբ է ընդունել իր ափերն հասած տարբեր դիրքի ու մասնագիտության հայորդիներին:

դեղի նույնանուն հրապարակը, որը ժամադրավայր է այցելուների համար. բոլոր ճանապարհները այստեղ տանում են Սբ. Մարկոս:

Հրապարակը օրվա բոլոր ժամերին լեցուն է աշխարհի չորս կողմերից եկած զբոսաշրջիկներով եւ գեղեցիկի սիրահարներով, որոնք այստեղ են գալիս վայելելու քարգործ վարպետների հրաշակերտած Դոժերի պալատն ու զանգակատունը: Հրապարակի իսկական տերերն աղավնիներն իրենց տիրական, բայց եւ մարդամոտ պահվածքով ու համարձակությամբ բերկրանի պահեր են պարգեւում հազարավոր մարդկանց, խայտանվով լցնում նրանց սրտերը:

Վենետիկն իր հազար ու մեկ եկեղեցիներով, գեղանկարչական ջրափողոցներով եւ ոսկենկար գոնդոլներով ուղղակի աննկարագրելի պատկեր է ներկայացնում: Ով էլ որ լինես, ակամա ինքդ քեզ բանաստեղծ կամ երաժիշտ ես զգում, ծեռքդ վրձին է մղվում: Քաղաքն ինքը կարծես անընդհատ մի նկար լինի՝ ստեղծված տարբեր սերնդի նկարիչների ու արվեստագետների կողմից: Մեծ ջրանցքը եզերող տներն ու պալատները իրար նման են լոկ այնքանով, որ քանով որ բոլորը դուռ ու պատուհան ունեն: Դրանք, չնայած ոճական միասնությանը, մեկը մյուսին ամենեին չեն կրկնում, զանազանվում են զարդանախշերով ու գունագեղությամբ: Եթե Վենետիկն իր ճարտարապետությամբ աշխարհի շատուշաս քաղաքների նման երաժշտություն է հիշեցնում, ապա արքերությունն այն է, որ դա այստեղ քարացած չէ, այլ հնչող: Երաժշտական է ամեն ինչ, սկսած երկարաձգային կայարանի անվանումից՝ «Սանտա Լուչիա», մինչեւ ամեն հայ լսափոխի լսվող գեղահունչ իտալերեն: Յուրաքանչյուր քաղաք ունի տարվա իր եղանակը: Մինչդեռ Վենետիկը գեղեցիկ է տարին բոլոր, օրվա տարբեր ժամերին: Եթե նույնիսկ մառախուղն է իջնում, քաղաքին հաղորդում է առանձնահատուկ խորհրդավորություն. եկեղեցիների գմբեթների ու զանգակատների աշտարակների ուրվագծերն ասես ծուլվում են երկնքին՝ ստեղծելով ներդաշն ու ծույլ մի պատկեր:

Մեծ չէ քաղաքն իր տարածքով. թե ուզենաս, մի երկու ժամում արագ «պտույտ մը» կգործես: Շատրվաններ, սակայն, չկան: Այն տարածությունն է, թե նեղլիկ փողոցներով, քարտեզները ձեռքերին անշատ քայլողներ, բոլորն անխտիր, սիրահարվածներ են: Աղուստ են, արտաքինից զուտ ու պարզ, եթե չասենք՝ անշուք եկեղեցիները ներսից լույս են ճառագում, հիացնում Տիցիանի եւ Տինտորետտոյի, Բելլինիի ու Վերոնեզեի ոմանկարներով, Կանովայի քանդակներով: Եկեղեցիները, իրենք արդեն մի մի բանգարան, հաճախ են հյուրընկալում Դալիի ու Շագալի ստեղծագործությունները, իսկ երեկոյան ժամերին վերածվում համերգասրահների, որտեղ միշտ կարելի է Վիվալդի ու Տարտինի, Հենդել ու Սոցարտ լսել:

Արհեստներն ու արվեստները այստեղ ծաղկել են միջին դարերից սկսած: Մինչ այսօր անգերազանցելի են հարվում վենետիկցի վարպետների, հատկապես Մուրանո կղզում պատրաստված գեղարվեստական աղակեղծումների իրերը, Բուրանոյի ասեղնագործությունները, բազմաձեւ ու բազմագույն այստեղ տեղի ունեցավ կինոյի միջազգային անդրանիկ փառատոնը: Իսկ պարբերաբար անցկացվող գեղարվեստական բիենալները Վենետիկի անունը հայտնի են դարձրել արվեստասեր ամբողջ աշխարհում:



Վենետիկյան տեսարան: Գեղանկար հեղինակի

Հայկական հիշատակներ

Այլազգիների համար չգիտեմ, բայց հայերիս համար Վենետիկը նախ եւ առաջ ուխտավայր է, որ անհիշելի ժամանակներից տուել է նստ հայի ոգին, ստեղծվել են ազգային արժեքներ: Պատմական ավանդույթի համաձայն Սբ. Մարկոսի գլխավոր մուտքի բրոնզյա չորս ծիարձանները Տրդատ Ա հայոց թագավորի նվերն են Վենետիկին: Ներսես Պարտիկին է վերագրվում 532 ին քաղաքի առաջին եկեղեցին՝ Սբ. Թեոդորոսը հիմնելու պատիվը, որից ուղիղ մեկ դար անց Իսահակ հայազգի փոխարքան կառուցում է Տրյելլոյի փառահեղ տաճարը:

Հանրահայտ է հատկապես քաղաքի՝ հայկական տպագրության խանձարուրը եղած լինելու հանգամանքը, երբ 1512 ին այստեղ լույս տեսավ հայերեն առաջին գիրքը: Ըստ պատմական վավերագրերի, վենետիկյան պետությունը մատուցած տարաբնույթ ծառայությունների համար հայերը վկայված են եղել իբրեւ «բազմերախտ եւ նախասիրված ազգ հայոց»: Դա թույլ է տվել նրանց դեռ 13 դարից ունենալ «Հայոց տունը»:

Մինչ այսօր էլ Սբ. Մարկոսի հրապարակից ոչ շատ հեռու կարելի է այցելել Հայոց բաղ, որտեղ գտնվում է Սբ. Խաչ հայկական եկեղեցին: Վերջինիս մասին առաջին հիշատակությունը մեզ է հասել 1434 թվականին: Այն դարեր շարունակ իր հոգեւոր շահերությունն է ունեցել վենետիկահայոց կյանքում: Նրա կամարների ներքո հանդչում են մեր մշակույթի երախտավորների, ի մասնավորի Խաչատուր Երզրումեցու, ածյունները: Բառացիորեն լությունից հետո վերջերս կրկին հայկական ծեռով վերաբացվեց Սբ. Խաչը, որ խնամակալում է Սուրբ Ղազարի Մխիթարյան միաբանությունը:

Շնայած հայ ընտանիքների թվի կրճատմանը՝ ընդամենը 4-5, շարունակում է գործել Սուրադ Ռափայելյան վարժարանը: Այստեղ հայեցի դաստիարակություն եւ բազմակողմանի կրթություն են ստանում ինչպես մեծաքանակ, այնպես էլ հեռու գաղթօջախներից եկած տասնյակ պարման պարմանուհիներ: Վերջին շրջանում նրանց մեջ բավական բիվ են կազմում նաեւ հայաստանցի երեխաները, որոնք եւս բոլոր պայմաններն ունեն, Արարատ Չորդանյանի խոսքերով ասած, «արվեստագետ եւ եվրոպացի դառնալու համար»: Քա Ծենոզիո պալատն իր բարոկկո ոճով ձեւավորված հայելիների տարիով եւ հարմարավետ դասասենյակներով նա խանձելի միջավայր է ուսումնառության եւ եվրոպական հաղորդակցության հետ առնչվելու առումով:

Ու այսօր քաղաքի տարբեր ջրափողոցների վրա կարելի է տեսնել նաեւ նորջուղայեցի Շահրիմանյան ազնվական ընտանիքի ներկայության բազմաբիվ հետքերը, նրանց կառուցած պալատներն ու այլ շինությունները:

Սուրբ Ղազար

Սբ. Մարկոսի հրապարակից ջրային հանրակառքով ընդամենը 15 րոպեի ճանապարհ է մինչեւ «Հայոց կղզին», ինչպես այստեղ անվանում են Սբ. Ղազար: Շուտով կլրանա երեք դարն այն օրից, երբ Մխիթար Սեբաստացին իր 16 աշակերտներով ոտք դրեց բորոնների դարեր բուժարան ծառայած այս անխնամ կղզյակը: Այսօր ոչ միայն քառակի ընդարձակվել է «Մխիթարի տունը», այլեւ դարձել է իսկական բուրաստան՝ ավերակների խառնակույտից վերածվելով մշտի հոյակերտ տաճարի:

Ինչ խոսք, Մխիթարից թե՛ առաջ, թե՛ հետո շատ են եղել լուսամիտ եւ ազգանվեր մարդիկ: Սակայն իր հիմնադրած միաբանությամբ եւ գործի շարունակելիությամբ Մխիթարի անունը կրող այս հաստատությունը աննախադեպ եւ եզակի օրինակ է մեր բազմադարյան մշակույթում: Այսօրվա հեռվից նույնիսկ անչափելի է այն մեծ դերը, որ բերել են Մխիթարն ու աշակերտները մեր կյանքի իմացական ու կրթական մարզերին: Ի գին բազում դժվարությանց նրանք վերարծարծեցին ոգու կրակը՝ ոչ միայն մոռացությունից փրկելով մեր նախնյաց հոգեւոր գանձերը, այլեւ ստեղծելով նորերը:

1789 ին հիմնելով սեփական տպարան՝ Մխիթարյան հայրերը մեր մատենագրական գոհարներից զատ լույս աշխարհ հանեցին օտար գրական գլուխգործոցների ընտիր հայացումներն ու իրենց գիտական երկասիրությունները: Ի հակառակ դարերում մեզ սովորեցրած «գրաբարանոց» ու «պահպանողական» եւ այսօրինակ այլ բնորոշումների, վանական այս այրերի շնորհիվ ոչ միայն վերաժամկվեց ու իր նախնական ոճրաձեւը վերագտավ գրաբարը՝ «մեր հարց եւ բազավորաց» լեզուն, այլեւ հոկվեց եւ տարածվեց աշխարհաբարը: Նույն տարտանում, որը գիտակից իր դերին շարունակում է մայրենիի ու հայոց պատմության դասագրքեր ու բառարաններ մատուցել Սիյոնի մեր վարժարաններին, մեկուկես դար առաջ զսված աշխարհաբարով սկսեց լույս տեսնել հայ լրագրության նախադեսը՝ «Բազմավէպ» հանդեսը:

Վերջինս այսօր ոչ միայն շարունակում է իր անկանգ երթը, այլեւ իր կողքին ծնունդ է տվել հանանուն մի մատենաշարի, որ ընդգրկում է հայագիտության բոլոր բնագավառները:

Մխիթարի եւ նրա հետեւորդների նոթատետրը միշտ էլ նույնն է եղել՝ տանել հայությանը աշխարհի զարգացած եւ լուսավորյալ ազգերի շարքում: Սուրբ Ղազարը եղել եւ այսօր էլ շարունակում է մնալ Հայաստանի նախադուռը, իսկ Մխիթարյան հայրերը՝ մեր մշակույթի առաքելակիրները, որոնցով ճանաչել ու ճանաչում են մեզ: Բայրոնը միայն մեկն էր այն հազարավորներից, ովքեր նրանց միջոցով ծանոթացան մեր մշակույթին, սիրեցին հայոց լեզուն, արդեցին հայ կանան միաբանությամբ: Այսօր, երբ տակավաղել է Հայաստան այցելողների թիվը, Սբ. Ղազարը հավատարիմ է մնում իր առաքելությանը՝ ներկայացնելով «ոգի տիկ» մի Հայաստան: Հատկապես երեկոյան ժամերին, երբ աստվածային խաղաղությունն է իջնում կղզու վրա, այն խարիսխ նետած Մխիթարի դրոշակաղարեալ է հիշեցնում, որ այս էլ ճանի դարձ օտար ջրերում տնում է լուսաբ «Հայրենի հոգ դուրս՝ հայրենյաց համար»:

ԼԵՎՈՆ ԼԱՌԻՆՅԱՆ,
«Վենետիկ-Երեւան»

ԱՍՏ

Ջոն Դեյշը ԿՀՎ-ի նոր տնօրեն

Սենատի հետախուզության կոմիտեն միահամուռ հավանություն տվեց Կենտրոնական հետախուզական վարչության նոր տնօրենի դիրքին:

նում դիրքապահության փոխնախարար Ջոն Դեյշի թեկնածությանը:

Դեյշը հիշ թե շատ կազմակերպված ընդդիմություն չգտավ, ինչը հազվագյուտ երեւույթ է ԱՄՆ-ում: Դա բացատրվում է մասնավորապես նրա զբաղմունքի գերատեսչությունում նրա արգասավոր աշխատանքով, ինչպես նաեւ ԿՀՎ-ում նրա առայժմ կա գործողությունների սենատորների համար հասկանալի ծրագրով: Վերջինս արմատապես տարբերվում է Ջեյմս Վուլսիի կենսագրած մոտեցումից, որ տարբերվեց Օլդրիչ Էյմսի լրտեսական գործունեության մերկացման սկանդալից հետո: Վուլսիին դիրքապահող արեցին մասնավորապես այն դիրքապահով, որ նա չէր զգում որեւէ մեկին դիրքել եւ հարմարագույն անվստահության մթնոլորտ ստեղծել:

56 ամյա Ջոն Դեյշը արդեն խոստացել է հեռացնել մի քանի «ծեր» ղեկավարների եւ նշանակել երիտասարդների: Նրա խորին համոզմամբ ժամանակն է, որ երիտասարդներն սկսեն ղեկավարել ԿՀՎ-ն: Անհետանելի ճակատի մի քանի վետերաններ արդեն հրաժարական են տվել կամ դատապարտվում են ամենամոտ ժամանակներս հանգստի անցնել: Նրանց թվում են արտաքին հետախուզության ղեկավար Հյու Փրայսը, վերջին կանի բաժնի ղեկավար Դուգլաս Մակկիլին եւ գիտության ու տեխնոլոգիաների վարչության դեպ Ջեյմս Հիրը:

ԱՍՈՒԻԵՅԵՂ ՊՐԵՍ «ԻԶՎԵՍՏԻԱ»

ԲԵԼԳՐԱԴ

Այլախոհ Միլովան Ջիլասի մահը

Բելգրադի իր բնակարանում տրի հիվանդությունից 83 տարեկան հասակում վախճանվեց սառը դիպուկ մյուս շրջանի ամենահայտնի այլախոհներից Միլովան Ջիլասը, որն իր ողջ կյանքի ընթացքում, իշխանության դեկին թե բանտախցում եղած ժամանակ, անվերադարձորեն ծառայել է իր հայրենիքին Հարավսլավիային. հաղորդում է ամերիկյան «Նյուզուիք» հանդեսն իր մայիսի 1-ի համարում:

Ոռոշ առումով Ջիլասը կոմունիզմի մի լծի տակ ադած մտավորականի վառ օրինակ է ծառայում, նշում է հանդեսը, ավելացնելով, որ նա դասական է մտել գործել որպես Սերբական միաղեւորության հեղափոխական հակառակորդ եւ Տիտոյի կողմից ասիճանաբար բարձրացել դառնալու կոմունիստական գաղափարախոսության դեկավար դեմքերից եւ համաշխարհային Բ պատերազմում նացիստների դեմ մղված դարտիզանական կռիվների առաջնորդներից մեկը: Տիտոյի իշխանության գալուց զատ նրան են վերագրվում մի շարք բարձրաստիճան դատարաններ: Նրան համարել են կիրառող «ազգային կոմունիզմի» գաղափարախոսության, որը 1948 ին Խորհրդային Միության հետ Հարավսլավիայի ընդհարման տեղիք տվեց:

Բայց, բաց հանդեսի, նրան դատապարտում էին գաղափարախոսին անհարմարաց տակտն ու զգուշավորությունը, որի հետեւանքով էլ վտարվում է դեկավար դիրքերից եւ 1956 ին բանտարկվում: Այնուամենայնիվ, նա շարունակում է գրել կոմունիզմը քննադատող հոդվածներ ու գրքեր եւ արտասահմանում հրատարակել: Նրա հեղինակած գրքերից մեկը 1957 ին Արեւմուտքում դարձել է բեստսելեր:

Հայրենիք

Անկախ հեռուստախմբագրությունը
եթեր կհեռարձակվի
կիրակի օրվանից:
Տեխնիկական պատճառով այն
դադարեցվել էր:

«Ազգը» պատրաստվում է
Մայր Հայրենիք
հեռուստախմբագրության շաբաթվա
ծրագիրը տպագրել մոտ ժամանակներս:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Կանգ առած ակնթարթի մեջ Հայաստանի գույներն են

Լուսանկարիչ Հովհաննես Շիրազի ցուցահանդեսը «Աշխարհ Հայաստան» անունն է կրում

Երկ. Խնկո Աղոյ զրադարանում բացվեց բեյրութաբնակ լուսանկարիչ, արվեստագետ Հովհաննես Շիրազի (Ցերեցյան) «Աշխարհ Հայաստան» ցուցահանդեսը: Հայրենի եզերքի մասին դասմող գունավոր լուսանկարները հետո «Ֆիլմ զարհան», դահլիճում, դիտադասատոի վրա մեր երազի չափ հեռու ու մոտ աշխարհն է՝ Արևմտյան Հայաստանի դասմական հուշարձան մատնանշերով, աշխարհից մոռացված մի բուռ հայերով:

Տեսնե՞լ, թե՞ դիտել սակայն է ճիշտ լուսանկարչի համար: Նրա դիտանցածի մեջ արժեքավոր մնայունը որս ու դրոշմելու, կենդանացնելու, վերաիմաստավորելու շնորհ կա: Օտարի անձնագրով չորս անգամ այցելել է Արևմտյան Հայաստան, լուսանկարել, լուսադատկեր դարձրել այն, ինչ մեզ համար բանկ ու հեռու է: Մոտ 200-ի հասնող լուսադատկերներ ցուցադրելիս, բանաստեղծության մեղեդի ու զեկցությամբ զուգահեռ (դատկեր-մեղեդի խոսք խիստ ճաշակով ներդաշնակ այս ոլորտում սովորական լուսադատկերի ցուցադրումը շարժական կարի վերածել) դարոն Շիրազը մեկնաբանում է. «Անիի Սուրբ Փրկիչ կլսավեր եկեղեցին է: Վերջերս իմացա, որ ամբողջովին փոլ է եկել: Մայր տաճարն է. Էջմիածինը գեղեցիկ է տալիս բոլոր եղանակներին, բայց ինչքան ձմռանը նկարել մաքուր ճերմակով: սուրբ է ու աշխարհում ամենաարիությունը: 2000 տարի առաջ Տիգրան Մեծի շինած կամուրջն է Տիգրանակերտում: Կամրջի սյուների վրա երևացող նշաններ հայոց այբբենի նախատառերն են: Մարդս սարը նկարելու համար երեք օրվա հետևանքն ճամփա կար անցնելու, մինչև զագաթը հասնելիք: Մեզ ուղեկցեցին սատանցիներ. բարբառով էին խոսում: Սա էլ սատանցի Քեհիբյանների գերդաստանն է: Շարվեցին իրենց տան առաջնորդներին, ու լուսանկարեցի: Հայաստան աշխարհից անհետացած ադրում էին. «Երբ բազմոր, կարողիկոս ունինք, հարցրեք ի՞նչ դիտի լինի մեր վիճակը»:



Տեսարաններ Սուրից եւ վանից

Կարելի է ժամերով նայել ու դասմել: Մանավանդ որ ներկայացվածն ավելի շատ Կիլիկիա աշխարհին է վերաբերում, որի մասին ավելի շատ երգից գիտենք: Հովհաննես Շիրազի լուսադատկերների երկրորդ բաժինը ներկայացնում է իր բառերով ասած «ջուղի դեռ մեզ անծանոթ կենտրոններ, մասնավորապես Սիրիայի տարածքում գտնվող»:

60-ականներին, երբ առաջին անգամ արտասահմանցիներին Հայաստան աշխարհը ներկայացրեց գունավոր բացիկների տեսքով, երեսի չգիտեր, որ Հայաստանում էլ դրա տարվի կար: Չգիտեր նաև, որ հայրենիքում իր առած գործը բարեկական միտ դիտի շարժեր: Ներքուստ՝ էր, թե տնային կալանք դիտի կրեր նաև: Օրեր առաջ Ազգային դատկերասրահում բացվել էր հայ մեկ ուրիշ տաղանդավոր մարդու՝ լուսանկարիչ Մարտին Քեհիբյանի ցուցահանդեսը: Վարդեցն այստեղ է. շատդում է լուսանկարել արվեստակից ընկերոջը: «Հակա գործ է բուծը. տարիներս թեքաց-ին իր կյանքը վտանգին տակ դրած մեր սիրելի և երազի հայրենիքը նկարած է: Բախտավոր կդգամ, որ 70 տարիներն ետ ծանոթացանք: Երկուսս ալ հանձնեցի ենք, մեր բարբառը խոսեցանք»: Չեմ ուզում ցուցահանդեսի բացմանը հնչած բնաբազրական, բայց նաև իմենին հասկանալի բնորոշումներ բվարկել հայրենասեր դարձ, սիրտ հայրենիք կամուրջ ու այլն: Սոլիտակ վարդերի փունջը ձեռին բազմաթիվ հյուրերի մեջ Սեղան Սեւանի վայրող աչքերն են նկատում: Ավելի շատ Ղարաբաղը դատկերող նկարները տեսնելու ս դատամով է եկել: «Հովհաննես Շիրազը մի մարդ է, որը կարում է դատմությունը ազգի առաջադիմ հետ»:

ԱՆԱՏԻՍ ՀՈՎԱՆԵՍՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Չիլ հայերի աննկարագրելի աշխատասիրությունը

Ո՞ւր կառաջնորդի Չիլցյան եղբայրների մրցակցությունը

Որոշ ծնողա արտադրող վարդեցներ՝ Չիլցյան գերդաստանի անդամները հատուկ հարգանք ունեն Գերդաստանի նախահայրերը այդ գործը ծեռնարկել են դեռևս 15-16 դդ. 1623-ին Ավետիս Չիլցյանը Պոլսում մետաղների (անագ, պղինձ) որոշակի խառնուրդից ստացել է հատուկ հարվածդիմացկուն համաձուլվածք՝ ծնող դատրաստելու համար: Ստացման եղանակը որոշ գաղտնի, սերն դեսերունդ հաղորդվել է միայն ընտանիքի արու զավակներին: Դատրաստված ծնողաները իրենց դիմացկունությամբ եւ հնչյունի նրբությամբ գերազանցել են եվրոդական ամենաբանավոր մակնիշների արտադրանքին եւ արժանացել շատ բանների ու դատվոգրերի միջազգային մի շարք ցուցահանդեսներում: 1915-ի մեծ եղեռնից ոդջ մնացած Չիլցյաններին հաջողվել է տեղափոխվել ԱՄՆ, որտեղ Արամ Չիլցյանն երեխաներ յուրացնելով, եղբոր զավակներին է փոխանցում ընտանեկան արհեստի գաղտնիքները: Հուսկայա կան մրցակցությունը հարազատ եղբայրների միջեւ տարածաշնություն է ստացնում:

Ամերիկայի ամենաազդեցիկ բերթերից «Ռոդ Սրդիր Ջրնրլի» ադրիլի 21-ի համարում զետեղված բավական ծավալուն նյութից տեղեկանում ենք, թե «իսկամարտությունն» սկսվել է 1979-ին, ԱՄՆ-ում, Չիլցյան ընկերության հիմնադիր Ավետիս Չիլցյանի մահվանից հետո:

«Բանիս բուն իմաստով, մեղ՝ գործած կլինենք, եթե մի ֆանի տարում չդատանանք ծնողաներ արտադրող գլխավոր ընկերությունը», ասում է Սարբյան ընկերության հիմնադիր եւ ներկայիս նախագահ՝ 71 ամյա Ռոբերտ Չիլցյանը: Խոսքերն ուղղված են հարազատ եղբորը՝ 73 ամյա Արմանին, որի ղեկավարած Մասաչուսերս նահանգի «Ավետիս Չիլցյան» ընկերությունը 1930 թվականից սկսած այդ գործի մենաշնորհը վերցրել է իր վրա:

Հոր մահից հետո, Ռոբերտն իր ծեռը մեկնում է ընկերության համեմատաբար փոքր, կանադական միավորմանը, վերանվանում է Սարբյան եւ սկսում դայքարել եղբոր դեմ: Ընկերության փոխնախագահն է Ռոբերտի որդին՝ Բիլը:

«Թշնամանքը երկու եղբայրների միջեւ դարզապես անհավատալի է», ասում է «Սյուգիվ բրեյդս» դարբերականի խմբագիրներից մեկը, որի գնահատմամբ անցյալ տարի ընդհանուր առմամբ 45 միլիոն դոլարի ծնողաներ են վաճառվել, որից 25 միլիոնը դատկանում է Չիլցյան ընկերությանը, իսկ 10.7 միլիոնը Սարբյանին:

Միայն մի հարցում են նրանք համաձիս միմյանց հետ: Երկուսն էլ բծախնդիր են արտադրանքի որակի նկատմամբ եւ անընդհատ կատարելագործում են այն: Բոնդը ձուլելու ընտանեկան գաղտնիքը դահելով, նրանք ստեղծում են նորանոր տեսակների ու չափերի ծնողաներ, որոնք շատ արագ տարածվում են համաշխարհային շուկայում:

Մինչեւ տարածաշնությունները, նրանք բավական լավ աշխատանքի բաշխում էին կատարել իրենց միջեւ: Արմանը զբաղվում էր դայքի մաղ կանց ինքնաթիռությունների, իսկ Ռոբերտը արտադրության հետ կապված ավելի գործնական քայլերի մեջ կումով: Ընդհանրապես սկսվեց այն ժամանակ, երբ վերջինս անփող երիտասարդների շրջանում վաճառքն ավելացնելու նդատակով առաջարկեց իջեցնել ծնողաների գինը, դակասեցնելով ծուլվածքի մեջ օգտագործվող բիրեղի քանակը: Դատճառներից մեկն էլ Արմանի որդիների նեղդրավումն էր արտադրության մեջ: «Նա այդ քայլին դիմեց ինձ մեկուսացնելու նդատակով», ասում է Ռոբերտը՝ չնայած ավագ եղբայրը դնդում է, որ ընկերությունից բաժանվելն ու հեռանալը Ռոբերտի անձնական որոշումն էր:

Այսօր Սարբյան Ֆաբրիկայում ծեռով կատարվող աշխատանքները գերակշռում են, մինչդեռ Չիլցյանի արդիական բիվ 1 գործարանում ոչբոս ներն են հիմնականում գործում: Գործունեության ընդարձակվելով առաջին անգամ սկսել է էժանագին դղնձե ծնողաներ բողարկել, մինչդեռ երկրորդը բարձրակի վայրիկներ: Երկուսն էլ շարունակում են գերազանցել մեկը մյուսին իրենց բողարկած տարբեր գների (50-ից մինչեւ 400 դոլար արժողությամբ) ու չափերի ծնողաներով եւ առայժմ արտադրության «զարկերակը չափազանց արագ է խփում», քանի որ գնորդների շարքում հայտնվել են նաեւ երրորդ աշխարհի երկրներ: Հաջողությունն ակնբախ է, բայց արդյո՞ք այն կկարողանա հարթել երկու եղբայրների միջեւ ծագած տարաձայնությունները: Ժամանակը չէ՝ արդյոք (երկուսն էլ յդրանասունն անց են) հասկանալու, որ միասին ավելի մեծ, արդյունավետ կարող են հասնել: Ինչ առանձին առանձին:

Հ. Ս.

ԵՐԵՎԱՆ

Ֆրանսիական ֆիլմերի շաբաթը շարունակվում է

Մայիսի 10-ին Կինոյի տանը սկսված Ֆրանսիական ֆիլմերի շաբաթը նվիրված կինոյի 100-ամյակին, շարունակվում է: Ցուցադրված առաջին ֆիլմերը Մորիս Պիալայի 1991-ին ստեղծված «Վան Գոգն» է, առաջ Ժերար Ուրիի «Փախուստ» ժապավենը ստեղծված 1978-ին: Երեկ ցուցադրվեց Կլեր Դենիի 1992-ին ստեղծված «Մահը եւ Ժերմենը» ֆիլմը: Հիշեցնենք, որ Կինոտան ցուցադրումները սկսվում են ժամը 17-ին, առդահովված են հայերեն համաժամանակյա թարգմանությամբ: Իսկ «Մոսկվա» կինոթատրոնում մեկ օրվա տարբերությամբ ֆիլմերը ցուցադրվում են առանց թարգմանական միջամտության: Այսօր Կինոտան հանդիսատեսը կդիտի ռեժիսոր Կլոդ Շաբրոլի 1991-ին ստեղծված «Մաղում Բովարի» ֆիլմը՝ 2 ժամ 20 ռոպե տեւողությամբ: Իսկ վաղը Օլիվիե Ասայասի 1993-ին ստեղծված «Սարդ ջուր» ֆիլմը (տեւողությունը 1 ժամ): Երկուշաբթի օրը ցուցադրվելու է ռեժիսոր Ֆիլիպ դը Բրոկայի 1988-ին ստեղծված «Շուաններ» ֆիլմը (տեւողությունը՝ 2 ժամ 23 ռոպե):

Չոհրապի 29-րդ ցուցահանդեսը Բեյրութում

Բեյրութի Ռիմալի ցուցասրահում բացվել է նկարիչ Չոհրաբի 29-րդ ցուցահանդեսը, տեղեկացնում է Բեյրութում լույս տեսնող «Զարթօնք» օրաթերթը իր մայիսի 6-ի համարում:

Չոհրաբի առաջին ցուցահանդեսը բացվել է 1956-ին, Հալեպում: Պարզ ածխամատիանկարներից մինչեւ բանձր ջրաներկով (գուաշ) ստեղծված ստեղծագործություններն այժմ են ընկնում դարգության գեղեցկությամբ: Հիշյալ ցուցահանդեսում ներկայացված են գեղանկարչի 24 յուղաներկեր: «Յուրաքանչյուր գործերուն մեջ է ոգ լույսի եւ գույնի տոն կը տարնե Չոհրաբին գեղանկարները», գրում է թերթը:

«Լաստ Երեխան», ածխամատիտ, 1993 թ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Համազգայինի Հայ կրթական եւ մշակութային միությունը Հայաստանի դեսանկանության վերականգնման 77-ամյակի կատակցությամբ Երեւան քաղաքի միջնակարգ դոյոցների աշակերտների համար կազմակերպում է մրցանակաբաշխություն «Մայիսի 28. հարատեւ դայքար» թեմայով: Մրցանակաբաշխության առաջին փուլին մասնակցել ցանկացող երեխաները մինչեւ ս. թ. մայիսի 20-ը ներկայացնում են Համազգայինի գրասենյակ (Մաշտոցի 37, բն. 14): Աղյուսմենները կամվոխվեն ս. թ. մայիսի 26-ին: 10 լավագույն հեղինակների դարգեւատրությունը տեղի կունենա մայիսի 28-ին Համազգայինի գրասենյակում, ժ. 12.00-ին:

Երկրորդ փուլին կմասնակցեն առաջին 30 լավագույն աշխատանքների հեղինակները, որոնք Ժյուրիի առաջադրած թեմայով շարադրություն կգրեն մայիսի 30-ին, ժ. 15-ին Համազգայինի բատրոնի շենքում (Ժամանակի տուն, Պուշկինի 3): Աղյուսմենների ամփոփման եւ մրցանակների հանձնման արարողությունը կկայանա հունիսի 3-ին, ժ. 15-ին, Համազգայինի բատրոնում: Մրցանակաբաշխության մասնակիցների համար ժ. 16-ին կներկայացվի Վ. Սարոյանի «Մի կտոր բարություն» դիեսը:

Երկրորդ փուլի հաղթողների համար նախատեսված է երեք դրամական մրցանակ:

Լավագույն աշխատանքներ կդոդաղրվեն:

Լրացուցիչ մանրամասնությունների համար զանգահարել՝ 53-39-49

Համազգայինի Հայ կրթական եւ մշակութային միություն

ԱՐՄԻՆԴ
ԿԵՆՏՐՈՆԸ
հրավիրում է
ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹԻ՝
ԵՐԵՎԱՆ - ՍԻՆԳԱՊՈՒՐ - ԵՐԵՎԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ»
ավիաընկերության ԻԼ-86 ինքնաթիռով

7- ՕՐՅԱ ԴՐԱԽՏ ՁԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- ՑԱԾՐ ԳՆԵՐ
- ԲԱՐՁՐՈՐԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐ
- ԱՐՔԱՅԱՎԱՅԵԼ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ROYAL ՀՅՈՒՐԱԼՈՑ)
- ԲԵՌՆԵՐԻ ԱՆՍԱՔՍ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ
- ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻ ԿԱՐՈՂ ԵՔ ՍԿՍԵԼ «ԱՐՄԻՆԴ»-Ի ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ

Մենք կարող ենք ՍԻՆԳԱՊՈՒՐ եւ ՀՆԴԿԱՍՏԱՆ տեղափոխել մինչեւ 20 տ բեռ ամենացածր գներով
Կքննարկենք ցանկացած կոմերցիոն առաջարկ կապված ՍԻՆԳԱՊՈՒՐԻ եւ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ հետ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՍԻՆՇԵԿ ՄԱՅԻՍԻ 30-Ը
ԹՈՒՇՔԸ ԿԿԱՅԱՆԱ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՑ ՈՉ ՈՒՇ
ՈՒՂԵԳՐԻ ԱՐԺԵՔԸ՝ 1250$:

«Էրեբունի» հյուրանոց, 1 մասնաշենք, 301-307 ս.
Հեռ. 52-75-65, 56-13-92, 56-05-79

digitised by A.R.A.R.@

ՄՕԿ

15 մլն դոլլար՝ ազգային օլիմպիական կոմիտեներին

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Պաշտոնական մի տեղեկագիր հաստատում է, որ միջազգային օլիմպիական կոմիտեն 1994 թ. տուրջ 15 մլն. դոլլար է բաժանել ՄՕԿ-ի անդամ 193 երկրների ազգային օլիմպիական կոմիտեներին որպես օգնություն մարզիկներին եւ կոմիտեներին: 1993 թվականին օգնության ֆոնդը կազմել է 11.264.480 դոլլար: 1994 թվականին այն հասավ 14.843.971 դոլլարի: Այս գումարները գոյացել են ՄՕԿ-ի կողմից օլիմպիական խաղերի հեռուստացուցադրումների իրավունքների վաճառքից: Ուշագրավ է, որ ազգային օլիմպիական կոմիտեներին հատկացված գումարն ընդհանուր եկամտի միայն 7 տոկոսն է կազմում: Դա նշանակում է, որ 1994 թվականին ՄՕԿ-ը տուրջ 200 մլն. դոլլարի եկամուտ է ունեցել:

Ըստ նույն տեղեկագրի, գումարները հատկացվեցին հետեւյալ կերպով. Եվրոպա 3.811.868 դոլլար, Աֆրիկա 3.701.157 դոլլար, Ասիա 3.058.806 դոլլար, Ամերիկա 2.861.661 դոլլար, Օկեանիա 1.410.479 դոլլար:

Ամենամեծ գումարը ստացավ Հունաստանը 162.963 դոլլար, երկրորդը ԱՄՆ-ն է՝ 159.494 դոլլար:

Իմանալու համար, թե Միջազգային օլիմպիական կոմիտեն ինչ օգնություն է ցույց տվել Հայաստանին, դիմեցինք ՀՀ ազգային օլիմպիական կոմիտեի գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանին. «ՄՕԿ-ը ԱՕԿ-ներին գումարներ է հատկացնում միայն այն դեպքում, երբ համապատասխան ծրագրեր իրականացնելու հայտեր են ներկայացվում: Այսպես, անցյալ տարի Հայաստանի ԱՕԿ-ին 10 հազար դոլլար է հատկացվել օլիմպիական մարգածեւերից ազգային կուրսեր կազմակերպելու համար: 1994 թ. կազմակերպել ենք ծանրամարտի եւ ըմբշամարտի կուրսեր (5000-ական դոլլար): ՄՕԿ-ի եւ ՀՀ ԱՕԿ-ի համաձայնությամբ ըմբշամարտի մի-

ջազգային ֆեդերացիան (ՖԻԼԱ), ըմբշամարտի կուրսերի տնօրեն նշանակեց միջազգային կարգի մրցավար Ստեփան Ղազարյանին: Իսկ ծանրամարտի կուրսերի տնօրենը ծանրամարտի ՀՀ ֆեդերացիայի գլխավոր քարտուղար, միջազգային կարգի մրցավար Հենրիկ Գրիգորյանն է:

ՄՕԿ-ը անցյալ տարի մեզ 9.5 հազար դոլլար հատկացրեց եվրոպական ծրագրերն իրականացնելու համար: Այս գումարը նախատեսված է հավաքական թիմերի կամ անհատների ծախսերը փակելու համար, որոնք նախաոլորտասվում են օլիմպիական խաղերին:

Միջազգային օլիմպիական կոմիտեն իր վրա է վերցնում նաեւ ազգային օլիմպիական կոմիտեների նախագահների ծախսերը, երբ նրանք մասնակցում են Գլխավոր ասամբլեային, կամ մեկնում են օլիմպիական մայրաքաղաքը դիտելու ու դայմանագրերին ծանոթանալու:

Ամեն տարի ՄՕԿ-ը բոլոր ԱՕԿ-ներին 5000 ական դոլլար է տալիս աղմինիստրատիվ ծախսերի համար: Անցյալ տարի 1.5 հազար դոլլար էլ ստացել ենք հունիսի 23-ին օլիմպիական օրը նշելու համար (ներկայացրել ենք միջոցառումների համապատասխան ծրագիր): 1994 թ. մեր ԱՕԿ-ը նաեւ 3000 դոլլար դրամաշնորհ ստացավ ժամանակակից օլիմպիական շարժման 100 ամյակը լավագույն ձեւով նշելու եւ օլիմպիական շարժումը դրդռազանելու համար:

Հիմա ՄՕԿ-ը Հայաստանի ԱՕԿ-ին ամիսը 6720 դոլլար է հատկացնում Ատլանտայի օլիմպիական խաղերին նախաոլորտասվող մարզիկներին եւ նրանց մարզիչներին բոնուս տալու համար: Դա ուժի մեջ է այս տարվա հունվարից մինչեւ օլիմպիական խաղերը (18 ամիս): Հայաստանի 24 մարզիկներ եւ 25 մարզիչներ վերոհիշյալ գումարներից ամսական 20-80 դոլլար բոնուս են ստանում»:

ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

«Համո» Խաչատրյանի հիշատակին

Երբ արվեստագետները դատմության մեջ մնում են իրենց գործերով, արդյունքներով եւ այնպիսիք, որոնք ժողովրդին մատուցած իրենց ամենատարբեր ծառայություններով նույնպես մնում են դատմության մեջ: Դրանցից մեկն է նաեւ հայկական ֆուտբոլի զարգացման գործին կյանքը նվիրած մարզիկը, մարզիչը, մանկավարժը, հանրապետության վաստակավոր մարզիչ Հմայակ Խաչատրյանը, որին մեր սերունդը ճանաչում է ընկեր Համո անունով:

«Թուրքական յաթաղանից մազապուրծ եղած մանչուկը 1920-ին հանգրվանում է Գյումրիի ամերիկյան որբանոցում, ուր եւ մտերմանում է սպորտի հետ: Հայրենական դատերազմին զինվորագրվում է առաջին իսկ օրերից: Ռազմադաշտում վիրավորվում է ու տուն վերադառնում: Երեւանի Ֆիզկուլտուրայի ինստիտուտն ավարտելուց հետո ամբողջապես նվիրվում է ֆուտբոլին, սկզբում աշխատելով որպես մարզիչ, միաժամանակ ստանձնելով նաեւ մրցավարի դարտականությունը: Նրա սաներից են մեր անվանի ֆուտբոլիստներ Հովհաննես Զանազանյանը, Արմեն եւ Ալբերտ Սարգսյանները, Հովհաննես Մանթարյանը, Երվանդ Սուքիասյանը եւ ուրիշներ:

Մարզիչ մանկավարժի հիշատակը հավերժացնելու համար երկար տարիներ նրա տնօրինած, այժմ արդեն իր անունը կրող Էրեբունու շրջանի ֆուտբոլի մարզադդրոցի խաղադաշտում երկրորդ անգամ տեղի ունեցավ հուշամրցաշար, որին մասնակցում էին հանրապետության եւ մայրաքաղաքի Շենգավիթի ու Էրեբունու շրջանների ֆուտբոլի մասնագիտացված մարզադդրոցների, ինչպես նաեւ «Նայիրի» մարզակումբի դատանի ֆուտբոլիստները: Իրենց հիանալի դրսեւորեցին հանրապետական մարզադդրոցի մարզիչներ Հակոբ Չալիկյանի եւ Ալեքսան Սարաֆյանի սաները, որոնք 4 հանդիպումներում չկորցրեցին ոչ մի միավոր: Մրցաշարում 6 գոլի հեղինակ դարձավ հանրապետական մարզադդրոցի սան Ասմանազ Փաշաշյանը: Նրա թիմակից Արսեն Մեհրյանը ճանաչվեց մրցաշարի լավագույն խաղացող:

ԳԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՈՒԵՖԱ

Կայացավ «Ինտերտոտոյի» վիճակահանությունը

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Վալենս, Ֆրանսիա

Ինչպես հայտնի է, ՈՒԵՖԱ-ն կոմբայնի թիմերի համար «Ինտերտոտո» անունով նոր մրցաշարք է կազմակերպում: Այն սկսելու է հունիսի 24-ին եւ ստդարեզ են դուրս գալու ինն ավարտական մասի 60 թիմեր: Մրցաշարում առաջին չորս տեղ գրաված ները իրավունք կստանան մասնակցելու ՈՒԵՖԱ-ի գավաթի հերթական խաղարկության նախնական փուլին: Շվեյցարիայում, Նիոն քաղաքում, որտեղ գտնվում է ՈՒԵՖԱ-ի կենտրոնակայանը, արդեն տեղի է ունեցել «Ինտերտոտոյի» վիճակահանությունը: Ուշագրավ է, որ ֆուտբոլի եվրոպական առաջնության

ավարտական 49 երկրներից 10-ը որոշել են չմասնակցել «Ինտերտոտոյի» մրցումներին: Այդ հրաժարվողների թվում են ֆուտբոլային այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իտալիան եւ Իսպանիան: Պատճառը այդ երկրների ֆուտբոլային գերհագեցած օրացույցն է: Չնայած դրան, Հայաստանին այնուամենայնիվ տեղ չհատկացվեց: Նույն բախտին արժանացավ նաեւ Ադրբեջանը:

ՖՈՒՏԲՈԼ

Բրազիլիայի հավաքականը առանց Ռոմարիոյի

Աշխարհի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը [illegible] կրկին ստացված անվանի մարզիչ Մարիո Զագալոն նշեց այն 22 ֆուտբոլիստների անունները, որոնք նախաոլորտասվում են մայիսի 17-ին Թել Ավիվում կայանալիք Իսրայել-Բրազիլիա ընկերական խաղին: Բրազիլիայի հավաքականում ընդգրկվել են 4 նոր խաղացողներ Ռոջերը, Լեանդրոն, Ամարալը եւ Գելյոն: Զագալոն որոշեց չվերցնել այն 4 թիմերի «Ատլետիկո մինեյրոյի», «Կրուզեյրոյի», «Վասկո դա Գամայի», «Ֆլամենգոյի» խաղացողներին, որոնք այդ օրը Բրազիլիայի գավաթի խաղարկության հանդիպումներին են մասնակցելու:

Բրազիլիայի հավաքականի հետ Իսրայել չի մեկնի նաեւ աշխարհի վերջին առաջնության լավագույն ֆուտբոլիստ Ռոմարիոն:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Հարբած մրցավարը

Բրազիլիայի առաջնության «Կորինթիանս» եւ «Սան Պաուլո» թիմերի հանդիպման մրցավար Օսկար Ռոբերտո դե Կարվալին ըստ երեւույթին իր տարերքի մեջ չէր: Նա դաշտից հեռացրեց 4 խաղացողների եւ այդ ու ձախ տուրջ երկու տասնյակ դեղին քարտեր ցույց տվեց: Ֆուտբոլիստներն անակնկալի եկած չէին հասկանում, թե ինչի համար Լին դեղին քարտ ստանում: «Սան Պաուլոյի» հայտնի մարզիչ Տեդե Սանտանան [illegible]արկացած բացակայեց մրցավարի հասցեին. «Սա խելագար վիճակ է»: Իսկ խաղացողներից մեկը Ժունիոր Բանիանոն ասվեցրեց. «Այնտեղի հոտ է գալիս»: Մրցավարը ֆուտբոլիստների եւ մարզիչների անդամալիք խոսքերի եւ հայհոյանքների համար դաշտոնական բողոք ներկայացրեց Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիային: Բայց «Սան Պաուլոյի» դեկավարները խաղից հետո ստիպեցին մրցավարին սուլել ալկոհոլի հետքերը բացահայտող բալոնի մեջ: Մրցավարը չկարողացավ սուլել, վիճաբանվել, որ ալկոհոլի մեծ քանակություն է օգտագործել: Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի դեկավարները խոստացել են խնդիրը մանրամասնորեն հետաքննել:

Գ. Ա.

ԽՈՇԱՆԿԱՐ

Կլինսմանը՝ լավագույնը Անգլիայում

Աշխարհի ու Եվրոդայի բազմակի չեմպիոն Գերմանիայի հավաքականի եւ Անգլիայի «Տոտենհեմ հոտսդուր» թիմի ոմբարկու Յուրգեն Կլինսմանը լրագրողների կողմից ճանաչվել է այս տարվա Անգլիայի լավագույն ֆուտբոլիստ: Դա Կլինսմանի նմանատիպ առաջին հաջողությունը չէ: 1988 եւ 1994 թթ. Կլինսմանը լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Գերմանիայում: Անվանի ֆուտբոլիստը գալիք մրցաշրջանում կրկին հանդես է գալու բուն դեսլիգայում: Նա արդեն 2,5 մլն դոլլարի դայմանագիր է կնքել Մյունխենի «Բավարիայի» հետ:

Կորշնոյն՝ առաջատար

Մադրիդում սկսված շախմատի միջազգային խոշորագույն մրցաշարում, երկու տուրից հետո առաջատարներն են Շվեյցարիան ներկայացնող Վիկտոր Կորշնոյը եւ նախկին ԽՍՀՄ մեկ այլ շախմատիստ՝ Վալերի Սալովը, որն իր հերթին հանդես է գալիս Իսպանիայի դրոշի ներքո: Երանք վաստակել են 1,5-ական միավոր:

Հաղթանակի ողբերգական հետեւանքները

Եվրոդայի առաջնության ընտրական փուլում Թուրքիայի հավաքականն արտագնա խաղում 2-1 հաշվով անակնկալ հաղթանակ տարավ Շվեյցարիայի հավաքականի նկատմամբ: Թուրքիայում այդ հաղթանակի «տոնակատարությանն» ժամանակ զոհվեց վեց մարդ՝ չորսը սպանվածից, երկուսը՝ զենքի կրակոցից:

Ֆուտբոլի Եվրոդայի առաջնության պատասխան հանդիպում
ԻՍՊԱՆԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ
հունիսի 7-ին
ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան եւ Ավիացիայի գլխավոր վարչությունը կազմակերպում են հատուկ ուղիղ չվերթ
ԵՐԵՎԱՆ-ՍԵՎԻԼԻԱ-ԵՐԵՎԱՆ
ֆուտբոլիստների եւ մարզասերների համար:
Ձեզ սպասում են հարմարավետ հյուրանոցներ եւ հաճելի տպավորություններ:
Տուրիստական ֆիրմաներին տրամադրվում է էական զեղչ:
Չեւակերպումը՝ մինչեւ մայիսի 16-ը:
Մեկնումը՝ հունիսի 4-ին, վերադարձը՝ հունիսի 8-ին:
ք. Երեւան, Վարդանանց փ. 13, III հարկ
Զանգահարեք՝
570-330, 570-692, 521-248
ARINA

digitised by A.R.A.R.@

Օրվա հեռագիրը

ԵՐՅԱՆ

Նախիջեւանը դաշտանում է Թուրքիային ահաբեկչությունից

Մայիսի 1-ից Թուրքիան վեց ամսով արգելված գոտի է հայտարարել Հայաստան-Թուրքիա սահմանի մի ընդարձակ շրջան, որը կարսի Տիկոռ գավառից շարունակվում է մինչեւ Արաքսի հյուսիսային մասերը: Թուրքական մամուլը հաղորդում է, որ որոշման դաշտաոը PKK ականների ներքափանցումներին արգելք լինելն է:

Հետեւելով Թուրքիային Ադրբեջանը եւս Նախիջեւան-Թուրքիա սահմանի վրա համադաշխան միջոցներ է ձեռնարկել: Նախիջեւանի խորհրդարանի նախագահ Նամիկ Հասանովը հայտարարեց, որ «իրենք ամեն ինչ կանեն, որպեսզի Թուրքիան փրկվի ահաբեկչության փորձանքներից»: Այս նպատակով, խիստ հսկողության միջոցներ են ձեռնարկված Նախիջեւանի Հայաստանի սահմանի մերձակա Սադարակ գյուղամաղամում եւ այլ վայրերում: Նախիջեւանի եւ Թուրքիայի միջեւ «Կարսի կամրջի» (ադրբեջանցիներն այսպես են հորջորջում Արաքսի վրայով անցնող կամուրջը) պահպանությունն ուժեղացվեց: Ն. Հասանովը հաղորդել է, որ նախկինում սահմանի վրա տեղի են ունեցել PKK ականների ձերբակալման դեպքեր, որոնք բռնվել են Թուրքիա գնելի անցկացնելու փորձի ժամանակ, եւ որ վերջիններս իրենք հանձնել են թուրքական իշխանություններին:

ԼՈՅԱՆ ՏՄՊԱՆ

ԿԻՊՐՈՍ

«Մեր այս պետությունը բոլորովին իր տեղում չէ», գրում է թուրք լրագրողը

«Անցած քսան տարիների ընթացքում մեր որդեգրած հաղթական քաղաքականությունը մեզ տնտեսական ճգնաժամի առաջ է կանգնեցրել: Բյուրոկրատիզմը իշխում է ամենուրեք, իսկ առողջապահությունը խղճալի վիճակում է: Երբ սա է դեմոկրատիա ասվածը, ապա ես դեմ եմ էվեարկում դրան: Շնորհակալություն, բայց ես այդպիսի վարչակարգի տակ չեմ ցանկանում ապրել: Մենք չենք կարողացել կրճատել առաջադրի հարը, ոչ էլ լուծել բնակարանային հարցը: Անձահատակները այնքան միջ բուսակ են ստանում, որ շատով նրանք ստիպված կլինեն վաղը դուրս գալ մուրացկանությամբ զբաղվելու»: Այսպես է գրում Յեդիաոզ Սարդեր անունով թուրք կինոռուցի մի լրագրող Կիպրոսի թուրքական մասում հրատարակվող «Վաքան» օրաթերթում. Նիկոսիայից հատուկ մեր թերթին ուղարկած իր խմբագրականում հայտնում է «Այրվրս Ռիվիյու» շաբաթաթերթի խմբագիր Ջորջ Տեր-Բարսեղը:

Թուրք հեղինակագիրը, ում աղրում եւ աշխատում է Կիպրոսի գրավյալ տարածքում, չաղուզանց մեղայ գոյներով է ներկայացնում այդ շրջանի ապրուստի եւ աշխատանքի պայմանները: Նրա տեսակետները գալիս են լրացնելու հաղթական այն անկայունությունը, որն ըստ դիվանագիտական շրջանակների, իշխում է այսպես կոչված ամբողջ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունում», որտեղ վերջերս Դանկտեշը վերընտրվեց «նա խագահ» շատ ավելի նվազ քվեներով, քան նախորդ անգամները:

«Քաղաքական հողի վրա, շարունակում է Սարդեր, շրջանի ինքնակոչ խորհրդարանը զնալով ավելի է իրեն մեկուսացնում ժողովրդից, մինչ առկա կուսակցությունները անկարող են լուծել ժողովրդին հուզող նույնիսկ ամենահասարակ հարցերը: Մեր այս պետությունը բոլորովին իր տեղում չէ, իսկ բնակչությունը հուսահատ եւ անապահով վիճակում է», գրում է նա:

Խոսքում նշվում է նաեւ, որ 1974 թվի ամառվանից, երբ թուրքերը գավթեցին կիպրոս ամբողջ տարածքի 37 տոկոսը տեղահան անելով ավելի քան 200 հազար հայերի, 1619 հոգի անհետ կորել են: Նախքան ներխուժումը Կիպրոսի բնակչության կազմում կային 520 հազար հայեր եւ 120 հազար թուրքեր:

Ներխուժումից հետո, ՄԱԿ-ի տվյալներով, հիմնականում Անատոլիայի խորքերից այնտեղ են բերվել մոտ 35 հազար թուրք, մինչդեռ մոտ 40 հազար թուրք կիպրոսցիներ թողել են կղզին, հաստատվելու համար Անգլիայում, Ավստրալիայում կամ որեւէ այլ երկրում, ներկա հաստատներով տարածաշրջանում թողնելով մոտ 80 հազար բնիկ թուրք կիպրոսցիների: ■

Ռուսաստանը Մութալիբովին Բաքվին հանձնելու հիմքեր չի տեսնում

ՄՈՍԿՎԱ, 11 ՄԱՅԻՍ, ՌԻԱ-ՆՈՎՈՍՏԻ: Ռուսաստանի գլխավոր դատախազությունն առայժմ հիմքեր չի գտնում Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Մութալիբովին այդ հանրապետության իրավապահ մարմիններին հանձնելու համար, ՌԻԱ-ի թղթակցին հայտարարեց Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի ավագ օգնական Ալեքսանդր Զվյագինցեւը: Գլխավոր դատախազությունն ուշադիր ստուգում է Մութալիբովին ներկայացված մեղադրանքին առնչվող բոլոր փաստաթղթերն ու հանգամանքները, գործելով Ռուսաստանի դատական օրենսդրությունը, ինչպես նաեւ միջազգային դրակտիկային խստիվ համապատասխան եւ երկու եկրների վավերացրած պայմանագրերի հիման վրա, ասաց Ալեքսանդր Զվյագինցեւը:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

սեփական երկհարկանի տուն արտասահմանյան դրասենյակների համար:
Հասցեն՝ ք. Երեւան, Վրթանես Փափազյան 41, Հարիթանակ զբոսայգու մոտ:
Հեռ. 25-38-93, 25-44-63:

TACIS BCC YEREVAN

BUSINESS COMMUNICATION CENTRE (TACIS EU)

Business Communication Centre Yerevan- a project of the European Union TACIS Programme- seeks a

DIRECTOR

with excellent managerial experience and fluent English, to lead the next phase of the BCC development.

We look for initiative, effective candidates with marketing skills and with the ability to grasp and resolve complex problems of exporting companies.

As we are moving into new premises, please try to contact us by one of the following phone numbers: 58 26 05 or 22 16 15; 22 02 37; 22 21 45 on week-days, from 9 a. m. till 6 p. m. before 19 May, to agree on an interview.

BCC Yerevan Office

BCC is also seeking an efficient

SECRETARY

with proved touch-typing skills and fluent English.

Communicative, initiative team-players are encouraged.

Please contact us by one of the phone numbers given above.

BCC Yerevan Office

ՏԱՐԱՍԱՀ

Չեչնիա. Մորտարիումի ժամկետը լրացավ

Մայիսի 28-ի ժամը 00-ից Ռուսաստանի Դաշնության նախագահի հրամանով հայտարարված Չեչնիայում զինված ուժերի կիրառման մորատորիումի գործողության ժամկետը լրացել է մայիսի 12-ի կեսգիշերին: Ինչպես հաղորդում է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակիցը, դրա ավարտումը համընկել է հարավային Շալի քաղաքի գրոհայինների հերթական զինված հարձակման հետ: Մարտի հետեւանքով հանգամանական ուժերի ստորաբաժանումները խփել են հետեւակի մի գրոհային մեքենա, ոչնչացրել երեք գրոհային: Չինծառայողների կողմից կորուստներ չկան: Այս մասին մայիսի 12-ին հայտնել է Գրոզնիում Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության լրատվության վարչության ներկայացուցիչ, գնդապետ Նիկոլայ Շուլգինը:

ԱՐՍԵՆՊՈՒԵՍ

Ռահմոնով-ընդդիմություն հանդիպումը Քաբուլում՝ մայիսի 15-ին

Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովի հանդիպումը Տաջիկստանի ընդդիմության ղեկավար Սաիդ Աբդուլո Նուրիի հետ տեղի կունենա մայիսի 15-ին, Քաբուլում: Այս մասին ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնի է դարձել մայիսի 12-ին, իրազեկ աղբյուրներից: Տաջիկական «բարձրաստիճան հանդիպման» անցկացման նախաձեռնությունը պատկանում է Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովին եւ հավանության է արժանացել ընդդիմության կողմից:

ԱՐՍԵՆՊՈՒԵՍ

Մոսկվայի տարածքային բաժանումը արմատապես փոխվելու է

ՄՈՍԿՎԱ, 12 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐԲ ԻՍՍ ՊՐԵՍ: Հավանորեն մինչեւ ամսվա վերջը Մոսկվայի հաղթային դումայի վերջնականապես կիսատաի մայրաքաղաքի տարածքային բաժանման մասին օրենքը, հայտնեց մայիսի 11-ին ՍԲԴ մամլո կենտրոնը: Նախորեին պատգամավորները սկսել են ինքնարկել օրինագիծը, որի համաձայն, մասնավորապես նախկին 32 շրջանների փոխարեն ենթադրվում է կազմել 125-ը՝ պահպանելով շրջանի կարգավիճակ ունեցող երեք ավան:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Ազգ» թերթի խմբագրությունը Մաշտոցի շրջանի դատախազության խնդրանքով տպագրում է հետեւյալ հայտարարությունը: Այն հաղթանակներին, ովքեր ավանդներ են հանձնել Մաշտոցի շրջանի թիվ III միջնակարգ դպրոցի շենքում գտնվող «Արմեն-ԳԵՍ» ԱՊ թնկերության նախագահ Գագիկ Ռաֆիկի Դավթյանին եւ փոխնախագահ Վասակ Շահումի Նազարյանին, խնդրվում է ա/թ մայիսի 16-ից, ժամը 8.00-ից մինչեւ 17.00 ներկայանալ Մաշտոցի շրջանի դատախազություն (Ն. Ջ. Ֆարխոյանի մոտ:

Մեր հեռախոսահամարներն են՝ 39-89-26, 39-72-60, 39-16-60, մեր հասցեն է՝ Ա. Սարգսյանի փող. 8:

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՄ

Հայերեն տառերով «Յատրան» գրամեքենա: Գինը՝ մատչելի: Զանգահարել 77.30.98, Հասմիկին

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ են որակյալ կոշկակարներ եւ կոշկաձեւորներ (զագաստոչչիկ): Զանգահարել՝ 228392:

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

▬ Զանգահարողի հաշվարը գրանցող հեռախոսներ (ԱՕՀ) սնուցումը միայն հեռախոսային գծից (արտ. Մինսկ քաղաքի)

▬ «Ժիգուլի» եւ «Վոլգա» ավտոմեքենաների դողերը փչող կոմպրեսորներ 12 Բ աշխատող (արտ. Սանկտ Պետերբուրգ քաղաքի)

Զանգահարել՝ 637645, 630240

ԱՆԻ.5

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՖԻՐՄԱՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է

ԵՐԵՎԱՆ → ՄԻՆՍԿ ԲՐԵՍՏ → ՎԱՐՇԱՎԱ

«Էրեբունի» հյուրանոց, 1-ին մասնաճյուղ, 4-րդ հարկ, 456 սենյակ, հեռ.՝ 560506

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23, Աբովյան 2 Գրանցման թիվ 65. Գործ 69149. Պատվեր 1839 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության 12.05.1995 Գինը՝ 40 դրամ

digitised by A.R.A.R.@